Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական



Միշտ հիշենք Նրան

Կարո՞ղ եք ինձ հետ միասին պատկերացնել Մորոնի մարգարեին՝ ոսկե թիթեղների վրա Մորմոնի Գրքի վերջին բառերը փորագրելիս: Նա մենակ էր: Նա տեսել էր իր ազգի, իր ժողովրդի և իր ընտանիքի անկումը: Երկիրը պատերազմի «մի անընդմեջ շրջան» էր (Մորմոն 8.8): Սակայն նա չէր կորցնում իր հույսը, քանի որ տեսել էր մեր ժամանակները: Եվ այն ամենը, ինչ նա կարողացավ գրել, խնդրեց մեզ *հիշել* (տես Մորոնի 10.3):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) սիրում էր ուսուցանել, որ բառարանի ամենակարևոր բառը կարող է լինել *հիշել* բառը: Քանի որ մենք ուխտեր ենք կապել Աստծո հետ, նա ասել է, «ամենաշատը մենք կարիք ունենք հիշելու» դրանք:

Դուք կարող եք հաճախ գտնել *հիշել* բառը սուրբ գրություններում: Երբ Նեփին խրատում էր իր եղբայրներին, հաճախ նա խնդրում էր նրանց հիշել Տիրոջ խոսքերը և հիշել, թե ինչպես է Աստված փրկել իրենց հայրերին (տես 1 Նեփի 15.11, 25, 17.40):

Իր հրաժեշտի հրաշալի ուղերձում Բենիամին թագավորն օգտագործել է *հիշել* բառը յոթ անգամ: Նա հուսով էր, որ իր ժողովուրդը կհիշեր «Աստծո մեծությունը . . . և նրա բարությունն ու երկայնամտությունը» իրենց հանդեպ (Մոսիա 4.11, տես նաև 2.41, 4.28, 30, 5.11–12):

Երբ Փրկիչը մատուցեց առաջին հաղորդությունը, Նա հրավիրեց Իր աշակերտներին ճաշակել խորհրդանիշերն «ի հիշատակ» Իր զոհաբերության (Ղուկաս 22.19): Հաղորդության յուրաքանչյուր աղոթքում ես և դուք լսում ենք *միշտ* բառը *հիշել* բառից առաջ (տես ՎևՈւ 20.77, 79):

Իմ ուղերձը հրավեր է, նույնիսկ աղերս, որ հիշենք: Ահա երեք առաջարկ, թե ինչ կարող եք հիշել, մինչ ամեն շաբաթ ճաշակում եք հաղորդության սրբազան խորհրդանիշերը: Հուսով եմ, դրանք օգնում են ձեզ, ինչպես և օգնում են ինձ:

Հիշեք Հիսուս Քրիստոսին

Առաջինը, հիշեք Փրկիչին: Հիշեք, թե ով էր Նա երկրի վրա, ինչպես էր խոսում ուրիշների հետ և ինչպես էր բարություն ցուցաբերում Իր արարքներում: Հիշեք, թե ում հետ էր ժամանակ անցկացնում և ինչ էր սովորեցնում: Փրկիչը «ման եկաւ բարի անելով» (Գործք 10.38): Նա այցելում էր հիվանդներին: Նա հնազանդ էր Իր Հոր կամքին:

Ամենակարևորը, որ մենք պիտի հիշենք, Նրա վճարած մեծ գինն էր, որպեսզի ջնջեր մեր մեղքերի բիծը մեր հանդեպ ունեցած Իր մեծ սիրո արդյունքում: Մինչ մենք հիշենք Նրան, Նրան հետևելու մեր ցանկությունը կմեծանա: Մենք կցանկանանք լինել մի փոքր ավելի բարի, ավելի ներող և ավելի հոժարակամ՝ փնտրելու Աստծո կամքը և կատարելու այն:

Հիշեք, թե ինչը պետք է ավելի լավ անեք

Դժվար է մտածել Փրկիչի՝ Նրա մաքրության և կատարելության մասին, առանց նաև մտածելու այն մասին, թե որքան թերի և անկատար ենք մենք Նրա համեմատ: Մենք ուխտեր ենք կապել Նրա պատվիրաններին հնազանդվելու համար, սակայն մենք հաճախ շեղվում ենք այդ բարձր չափանիշներից: Սակայն

Փրկիչը գիտեր, որ դա այդպես էր լինելու, դրա համար էլ Նա տվեց մեզ հաղորդության արարողությունը:

Հաղորդության արմատները գտնվում են Հին Կտակարանի զոհաբերություններ մատուցելու արարողություններում, որը ներառում էր մեղքերի խոստովանություն (տես Ղևտացիս Ե.5): Մենք այլևս կենդանիներ չենք զոհաբերում, սակայն մենք նույնպես կարող ենք ազատվել մեր մեղքերից: Սուրբ գրություններում սա կոչվում է զոհ մատուցել «կոտրված սիրտ և փշրված հոգի» (3 Նեփի 9.20): Եկեք հաղորդության ապաշխարած սրտով (տես ՎևՈւ 59.12, Մորոնի 6.2): Երբ անեք դա, դուք ձեռք կբերեք մեղքերի թողություն և չեք շեղվի դեպի Աստված վերադարձի ճանապարհից:

Հիշեք, թե դուք ինչ առաջընթաց ունեք

Մինչ դուք քննում եք ձեր կյանքը հաղորդության արարողության ընթացքում, հուսով եմ ձեր մտքերը կենտրոնանում են ոչ միայն այն ամենի վրա, ինչը դուք սխալ եք արել, այլև այն ամենի վրա, ինչը ճիշտ եք արել, պահեր, երբ դուք զգացել եք, որ Երկնային Հայրը և Փրկիչը զոհ են եղել ձեզանից: Դուք նույնիսկ կարող եք ժամանակ տրամադրել հաղորդության ժամանակ խնդրել Աստծուն օգնել ձեզ տեսնել այդ բաները: Եթե անեք դա, ես խոստանում եմ, որ դուք ինչ-որ բան կզգաք: Դուք կզգաք, որ հույս ունեք:

Երբ ես արել եմ դա, Հոգին հաստատել է, որ չնայած ես դեռ հեռու եմ կատարելությունից, այսօր ես ավելի լավն եմ, քան երեկ էի: Եվ դա ինձ վստահություն է տալիս, որ Փրկիչի շնորհիվ վաղը ես կարող եմ նույնիսկ ավելի լավը դառնալ:

Միշտը երկար ժամանակ է, և այն ենթադրում է կենտրոնացված բազմաթիվ ջանքերի գործադրում: Ձեր փորձառությունից ելնելով, դուք գիտեք, թե որքան դժվար է գիտակցաբար մտածել ինչ-որ բանի շուրջ ամբողջ ժամանակ: Սակայն անկախ այն բանից, թե որքանով է ձեզ հաջողվում պահել Նրան միշտ հիշելու ձեր խոստումը, Նա միշտ հիշում է ձեզ:

Փրկիչը գիտի ձեր խնդիրները: Նա գիտի, թե ինչ է նշանակում, երբ կյանքի կարիքները ճնշում են ձեզ: Նա գիտի, որ դուք ունեք անհետաձգելի օրհնությունների կարիքը, որ գալիս են միշտ Նրան հիշելու և Նրան հնազանդվելու արդյունքում. «որպեսզի [դուք] նրա Հոգին *միշտ* [ձեր] հետ ունենաք» (ՎևՈւ 20.77, շեղագրերն ավելացված են):

Ուստի, Նա ամեն շաբաթ կրկին ողջունում է ձեզ հաղորդության սեղանի մոտ, մեկ անգամ ևս հնարավորություն տալով ձեզ վկայել Նրա առջև, որ դուք միշտ կհիշեք Նրան:

ՀՂՈՒՄ

1. Սպենսեր Վ. Քիմբալ, «Վեհացման շրջաններ» (address to Church Educational System religious educators, June 28, 1968), 5.

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Կյանքը կարող է դառնալ անհանգիստ և դժվարին մեզ համար մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին միշտ հիշելու համար: Ինչևէ, հաղորդությունն ամեն շաբաթ առանձնահատուկ հնարավորություն է տալիս մեզ խորհելու Նրա կյանքի և ուսմունքների շուրջ: Այժմ խորհեք, թե ինչպես կարող եք օգտագործել տնային ուսուցման հանգիստ պահերը և քննարկեք, թե ինչպես կարող եք ավելի շատ կենտրոնանալ Փրկիչի վրա: Ինչպե՞ս կարող եք օգտագործել այդ պահերը՝ խորհելու այն ամենի շուրջ, ինչն անձամբ կարող եք բարելավել: Որքանո՞վ է կարևոր հիշել ամեն շաբաթվա ձեր առաջընթացը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հիշեք երեք բան

Մորմոնի գրքում *հիշել* բառը շատ հաճախ է հանդիպում: Նեփին խրախուսեց իր եղբայրներին հիշել, թե ինչպես Աստված փրկեց իրենց հայրերին: Բենիամին թագավորը խնդրեց իր ժողովրդին հիշել Աստծո մեծությունը: Իսկ Մորոնին հրահանգեց իր ընթերցողներին հիշել, թե որքան ողորմած է Տերը:

Փրկիչին հիշելը շատ կարևոր է, մենք նույնիսկ ուխտ ենք կապում հիշելու Նրան ամեն անգամ, երբ ճաշակում ենք հաղորդությունը: Նախագահ Այրինգը հրավիրում է մեզ հաղորդության ընթացքում հիշել այս երեք բաները.

1. **Հիշեք Հիսուս Քրիստոսին.** Կարդացեք սուրբ գրություններ այն մասին, թե ինչպես Փրկիչը ծառայեց և սեր ցուցաբերեց ուրիշների հանդեպ: Ինչպե՞ս եք դուք զգում Նրա սերը: Ինչպե՞ս կարող եք ծառայել և սեր ցուցաբերել ուրիշների հանդեպ, ինչպես Փրկիչը:

2. **Հիշեք, թե դուք ինչը պետք է ավելի լավ անեք.** Վերանայեք ձեր անցած շաբաթն ապաշխարած սրտով: Ընտրեք մի բան, որը կարող եք փոխել և գրեք, թե ինչպես եք հասնելու այդ առաջընթացին: Դրեք ձեր նպատակը մի տեղ, որ կարողանաք հաճախ տեսնել այն:
3. **Հիշեք, թե դուք ինչ առաջընթաց ունեք.** Խնդրեք Աստծուն օգնել ձեզ տեսնել ձեր առաջընթացը: Գրի առեք ձեր զգացումները:

Մենք կատարյալ չենք, և Փրկիչը գիտի դա: Սա թե ինչու է Նա խնդրում մեզ հիշել Իրեն: Նրան հիշելը տալիս է մեզ հույս և օգնում է մեզ ցանկանալ առաջընթաց ունենալ: Նույնիսկ այն պահերին, երբ մենք թերանում ենք հիշել Նրան, Նախագահ Այրինգն ասում է՝ «Նա միշտ հիշում է ձեզ»:

«Հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը» (Մորոնի 10.3):

ԵՐԵԽԱՆԵՐ

Հիշել Հիսուսին

Ուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք պետք է միշտ հիշենք Հիսուս Քրիստոսին: Դա նշանակում է, որ մենք *հաճախ* պետք է մտածենք Նրա մասին և հետևենք Նրա օրինակին:

Հիսուսի նկարը դրեք այնպիսի մի տեղում, որ հաճախ տեսնեք:

«Եվ եթե դուք միշտ հիշում եք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ» (3 Նեփի 18.7):

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17:
Թարգմանության հաստատումը. 6/17: *First Presidency Message, February 2018*-ի թարգմանությունը: Armenian. 15046 201

Ճանաչեք նրան և նրա ընտանիքին

Այցելությամբ ուսուցման արդյունքում մենք սկսում ենք ճանաչել և սիրել յուրաքանչյուր քրոջը, որպեսզի կարողանանք օգնել նրան ամրացնել իր հավատը և ծառայություն մատուցել:

Հավատ, ընտանիք, սփոփանք

Ռիտա Ջեփեսոնը և նրա այցելող ուսուցիչը դարձել են լավ ընկերներ, մինչ նրանք այցելում և կիսվում են ավետարանի սկզբունքներով: Նրանց այցելությունները ներառում են նաև միասին խաղալ բառախաղեր: Դա Ռիտայի սիրած խաղն է, քանի որ գիտի, որ իրենք ընկերներ են և այցելությունը պարզապես նշում կատարելու համար չէ: Շատ բաներ կան, որ քույրերը կարող են անել այցելության ընթացքում, ինչպես օրինակ՝ միասին զբոսնել կամ այգում մի քանի մոլախոտ հանել, մինչ երեխաները խաղում են:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Նայեք ինքներդ ձեզ՝ որպես Նրա զավակներին ուղարկված Տիրոջ պատվիրակների: . . . Մենք հույս ունենք, որ . . . դուք անդամների համար կստեղծեք մաքուր, ավետարանի ուղղվածություն ունեցող դարաշրջան, հսկելով ու հոգալով հոգևոր և աշխարհիկ կարիքները օգտակար եղանակներով»:[1]

Տերը Մովսեսի միջոցով պատվիրեց Իսրայելի զավակներին՝ «ձեզ մօտ պանդխտացող օտարականը ձեր երկրի բնակի պէս լինի ձեզ համար, եւ քո անձի պէս սիրես նորան» (Ղևտացոց ԺԹ.34): Քույրերը, որոնց մենք այցելում և ուսուցանում ենք, գուցե «օտարական» լինեն մեզ համար մեր ծառայության սկզբում, սակայն, երբ մենք սկսենք ճանաչել նրանց և նրանց ընտանիքին, կմեծանա ցանկությունը «կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն» և կմիավորենք մեր «սրտերը միությամբ և սիրով մեկը մյուսի հանդեպ» (Մոսիա 18.8, 21):

Ռեյնա Ի. Աբուրտոն՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդականը, հիշում է, երբ նա նոր էր ամուսնալուծվել և եկեղեցու նոր անդամ էր: «Իմ այցելող քույրերը եկան իմ տուն,- ասում է նա,- և հաղորդեցին ջերմ զգացողություններ և սեր իմ սրտին»:[2]

Խորհեք այս մասին

Ի՞նչ իրադարձություններ են սպասվում այն քույրերի ընտանիքներում, որոնց դուք այցելում և ուսուցանում եք, որոնց մասին դուք պետք է տեղյակ լինեք և հիշեք:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Եկեղեցու պատվիրակները», *Լիահոնա,* նոյ. 2016, 62:
2. Ռեյնա Ի. Աբուրտոն, «Ի՞նչ է ինձ համար եղել Սփոփող Միությունը» Բրիգամ Յանգ Համալսարանի Կանանց համաժողովի ելույթից, 5 մայիսի, 2017թ., LDS.org:

Ծառայություն

Երբ մենք սկսենք ճանաչել և սիրել յուրաքանչյուր քրոջը, ում այցելում և ուսուցանում ենք և նրա ընտանիքին, մենք կստանանք անձնական ոգեշնչում, իմանալու, թե ինչպես արձագանքել յուրաքանչյուրի հոգևոր և նյութական կարիքներին:

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17:
Թարգմանության հաստատումը. 6/17: *Visiting Teaching Principles, February 2018*-ի թարգմանությունը: Armenian. 15046 201